ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ, 0015, ք.Երևան,Արգիշտիի 1

N 61/328

«28» 02 2018 թ.

«ԷՔՍՊԵՐՏ ՕՑԵՆԿԱ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ

ՊԱՐՈՆ Ա.ԲԱՐՍԵՂՅԱՆԻՆ

(ՀՀ, ք. Երևան, Արշակունյաց 5)

Հարգելի պարոն Բարսեղյան

Երևանի քաղաքապետարանի և «Էքսպերտ Օցենկա» ՍՊԸ-ի (այսուհետև՝ Ընկերություն) միջև 16.11.2017 թվականին կնքված թիվ ԵՔ-ԳՀԾՁԲ-18/4 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.13 կետով սահմանված է եղել, որ «Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է»:

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 18-րդ կետով և Պայմանագրի 7.13 կետով, սույն թվականի փետրվարի 5-ին էլեկտրոնային եղանակով պատշաճ կերպով ծանուցել է Ընկերությանը՝ ստորագրված համաձայնագիրը Երևանի քաղաքապետարան ներկայացնելու առաջարկով, սակայն Ընկերությունը սահմանված ժամկետում չի ներկայացրել ստորագրված համաձայնագիրը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Վերոգրյալով պայմանավորված՝ Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 12-րդ ենթակետով և պայմանագրի 7.13 կետով, որոշում է ընդունել միակողմանիորեն լուծել Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Պայմանագրի լուծարման արդյունքում Ընկերության՝ Պայմանագրի կատարման ապահովման տուժանքի մասին համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը ներկայացվելու է Ընկերությանը սպասարկող բանկին՝ տուժանքի վճարման պահանջով:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ **Գ. ՉԹՐՅԱՆ**

Կատարող՝ Ա.Վարդանյան
հեռ. 011-514216